



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՎ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցվո թեմական պատգամավորական ժողովը այս տարի գումարվեցավ նոյեմբեր 27—28-ին, Յունիքն Սիտիի Ս. Խաչ եկեղեցվուն մեջ, ուր ընտրված դիվանը — առաջին ատենապետ պարոն Տատուր Տատուրյան, երկրորդ ատենապետ պարոն Տիգրան Սրմսարյան և առաջին ատենադպիր պարոն Պետրոս Պոնտացի, երկրորդ ատենադպիր Տ. Շահե քահանա Ալթունյան — ձեռնհասությամբ ընթացք տվավ օրակարգին, որուն գործադրության մասնակցեցան 38 համայնքների մոտավորապես 100 պատգամավորներ:

Կիրակի հետ միջօրեի նիստին մեջ 99 քվեատուներու մասնակցությամբ կատարված ընտրությամբ և քվեից մեծամասնությամբ հառաջիկա չորս տարվան համար թեմակալ առաջնորդ ընտրվեցավ գերաշնորհ Տ. Մամբրե սրբազան արքեպիսկոպոս Գալֆայան, և եղած առաջարկը գործադրվելու ան միաձայնությամբ ընդունվեցավ առաջնորդ:

Ժողովականները, առաջնորդությամբ հոգևոր դասուն, ուրախությամբ ողջունեցին իմացության ընտրված թեմակալ առաջնորդը ու խանդավառությամբ երգեցին «Թագաւոր երկնաւոր» շարականի հոգեշունչ երգը, որուն խոսքին մեջ կարծես դեռ շատ թարմ է շունչը հայ քրիստոնյա հայրապետներուն:

Հուլված այդպես սրտաբուխ իրեն ընծայված պատիվին՝ Մամբրե սրբազան ուխտ կատարողի հավատքով կարծես բարձրաձայն աղոթեց երբ ըսավ՝ ինչպես անցնող 32 տարվան մեջ իբրև հովիվ, թեմակալ առաջնորդի պաշտոնի բերումով ալ պիտի մնար հավա-

տարիմ Մայր Աթոռին հանդես, պիտի պահպանեք բոլոր տրամադրությունները թեմական կանոնադրության, և միշտ արդարադատությամբ պիտի հովվեր իրեն հանձնված հոտը հայոց Ամերիկայի:

Պատգամավորական ժողովի փակումին հետո, Ս. Խաչ եկեղեցվո ընդարձակ և արդիական սրահին մեջ, կարգադիր հանձնախումբի կողմն սարքված ընթերթի սեղաններուն շուրջ հավիվ բոլորված էին բազմահարյուր կողնականներ, երբ ամբողջ հոգևորականներու առաջնորդությամբ ընտրյալ առաջնորդը տարվեցավ պատվո սեղանին, ուր իրենց պաշտոնի հանգամանքով արդեն տեղ գրաված էին Ս. Խաչ եկեղեցվո հովիվը՝ Տ. Հմայակ վարդապետ Ինդոյան, պարոն Հայկ Սմարյան՝ ատենապետը Կարգադիր հանձնախումբին, Պատգամավորական ժողովի դիվանի անդամները և հեռավոր համայնքներե եկած կարգ մը հոգևորականներ: Հոգեշնորհ Տ. Հմայակ վարդապետ Ինդոյան, երեկոյան առաջին խոսողը, իր, ինչպես նաև իր ծուխին՝ խնդակցությունը հայտնեց թեմական պատգամավորական ժողովի կատարած ընտրության համար ու շնորհավորեց ընտրյալ առաջնորդ սրբազանը:

Ս. Խաչ եկեղեցվո Մխական խորհուրդի ատենապետ պարոն Հայկ Սմարյան, ի դիմաց համայնքին և Կարգադիր հանձնախումբին, կարդաց ուղերձ մը:

Սեղանապետ պարոն Լուսինյան Շահպաղյան, եղբայր Ս. Խաչ եկեղեցվո սրահին բարեբար ողբացյալ Շահպաղյանի, որ տեղական մամուլի մը խմբագիրն ու սպորտի սյու-

նակագիրն է, համեմատած հումորով, հայերեն ու անգլերեն թե՛ զվարճալի և թե՛ լուրջ կատարած իր ուղերձն հետո՝ ընթացք տվավ հայտագրին:

Հայաստանյայց Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերպութեան ներկայացուցիչը՝ պարոն Նուպար Տորյան, որ մեր ազգային կյանքին հաճախ կստանձնէ խոշոր պատասխանատուութիւններ, մաքուր հայերենով կարողաց ուղերձ մը:

Թեմական պատգամավորական ժողովի առաջին ատենապետ պարոն Տատուր Տատուրյան, պարոն Տիգրան Սմարյանի հետ միասին նիստերու ընթացքին ցույց տված լայնախոհութեան, կարգ ու կանոնի բնախընդրութեամբ և ժողովին վեհութիւնը պահելու գիտակցութեամբ ժողովականներու երախտիքին արժանացած ըլլալով երբ հրաւիրվեցաւ ուղերձ մը ընելու՝ բռնու և երկարատե Ժափահարութեամբ ընդունվեցաւ:

Զգածված էր խորապես, երբ պարոն Տատուրյան կմաղթեր, որ թեմի բոլոր հոգեւորականները, ծխական խորհուրդներու անդամները, պատգամավորներն ու ժողովուրդը հնազանդ ու հարգալիւր գտնվին ընտրյալ առաջնորդին: Ամենքը պետք է ձեռք-ձեռքի տված՝ աշխատին հօգուտ եկեղեցւոյ պայծառութեան: Յուրաքանչյուրի պարտականութիւնն էր Թեմական խորհուրդի կողմէ տրված բոլոր հրահանգները գործադրել, առաջնորդին հանդէպ ըլլալ պարտաճանաչ և փոխադարձ հարգանք տածել իրարու հանդէպ: Միշտ մնալ հավատարիմ Մայր Աթոռին հանդէպ և ի գործ դնել անկէ եկած բոլոր հոգեւոր պատգամները: Եվ երեկոյան ուրախ պահուն և հանդիսավոր առիթով պարոն Տատուրյան խոնարհաբար առաւ աջը Մամբրե արքեպիսկոպոսին և անոր մաղթեց առողջութիւն և հաջողութիւն:

Հոգեշնորհ Տ. Իսահակ վարդապետ Ղազարյան, հանուն թեմի հոգեւորականաց դասուն, ըսաւ, թէ իր հոգեւոր եղբայրներուն անունով կուգար վստահացնել սրբազան հայրը, որ իրեն իր զավակները դինք խորապես կսիրեն և կհարգեն: Համերաշխութեամբ պիտի գործեն ընտրյալ առաջնորդին հետ և այն սիրով, որ իրենք կսիրեն Հայրենիքը: Այն եկեղեցականը, որ հայկական պատմութեան մեջ իր կապը խզեր է Մայր Աթոռէն, բացարձակ ոճիր է գործեր, և իրենք, հոգեւորականները սերտիւ կապված էին Մայր Աթոռին:

Պատգամավոր պարոն Տիգրան Պոյաճյան, որ ծանոթ է նաեւ իրեն հմուտ իրավաբան ու գրագետ, կարգաց շատ խնամով պատրաստած իր ճառը:

Պատգամավոր պարոն Հայկազ Նաճարյան դրվատեց պարոն Տատուր Տատուրյանի գեղեցիկ հատկանիշերը և հրաւիրեց հանդիսականները, որ օրվան արժանավորին տային իրենց հարգանքը:

Ամերիկայի հայոց թեմակալ առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս երբ հրաւիրվեցաւ խոսելու՝ ժողովուրդը մեկ մարդու պէս ոտքի կանգնեցաւ ու երկարատե ծափահարեց: Սրբազան հայրը կարծես բարձրաձայն կաղթներ երբ կխոսեր:

Խորին շնորհակալութիւն ունեն իր հոգեւոր զավակներուն և հօտին բարի: Ահա իրեն համար նոր օր մը սկիզբ կառնելու: Այդ նոր օրը պետք է լինի շինարար, և համերաշխ գործունեութիւն պետք է լինի հոգեւոր հոր և ժողովրդայն միջև: Ի դիմաց հոգեւորական դասուն հայր Իսահակի արտասանած խոսքերէն զգացված էր ու խորապես կգնահատել իրեն հանդէպ ցույց տրված անկեղծ վերաբերմունքի ոգին: Կարեւոր է Առաջնորդարանին մեջ, ի շահ մեր հայ կյանքին ունենալ աջակցութիւնը բոլորին:

Ունեն խորին շնորհակալութիւն դիմանին ու հանձնախումբերուն, որ ձեռնհասութեամբ կատարեցին Պատգամավորական ժողովի աշխատանքները: Նաեւ շնորհակալութեան խոսք ունեն իրեն ընծայված հարգանքին ու միաձայն վստահութեան համար: Մեծարել հարկ էր Ս. Խաչ եկեղեցւոյ Մխական խորհուրդն ու ծուխի համայնքը, որոնց ծառայել էր եկած ինք ասկից 28 տարի առաջ և ուրկէ կոչված էր առաջնորդական տեղապահի պաշտոնին առաջին անգամ: Անցնիլ ծառայութեան զանազան համայնքներու, վարել Գալիֆորնիայի թեմակալ առաջնորդի պաշտոնը ու դարձյալ վերադառնալ Յունիոն Միտիի դրացի մեկ քաղաքի՝ Պետրոսոնի մեր ծուխի հովիւութեան, որպէսզի մեյ մըն ալ կանչվեր առաջնորդական տեղապահի պաշտոնին, և ահա այսօր ալ պատահած հրաշքով մը հասարակութեան առջև կկանգնել իրեն ընտրյալ առաջնորդ:

Ի՞նչ պիտի ընէ ան իր պաշտոնին բերումով:

Պիտի ջանա Հայրենի դպրոցը հանձնել խնամոտ ձեռքերու, որոնք կարենան զայն տանիլ բաղձացված բարձրութեան մը:

Պիտի հաստատե մամուային քեմբեր Հայաստանյայց Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերպութեան անդամներու համար, ուր, մասնավոր հոգեւորականներու և ռաւոցիլներու հսկողութեան տակ, արձակուրդի օրերուն, մեր մանուկները և պատանիները ստանան Հայաստանյայց Եկեղեցւոյ, Հայոց պատմութեան և մշակութի վերաբերյալ նյութերու վրա ջամբված դաստիարակութիւն:

Տարիներով ունեցել եմ առիթ ներկա դառնվելու Թեմական պատգամավորական ժողովներու, բայց այս տարի մասնավորապես նկատելի էր ժողովականներուն ցույց տված խոհուն վերաբերմունքը հարցերուն նկատմամբ և հետո ալ երկօրյա ճաշկերույթներու և վերջի իրիկվան ընթրիքին առեն հայտնարեւմած խանդավառ ոգևորութունը՝

ազգային ու եկեղեցական երգեցողութիւններով հանդերձ, խորապես տպավորիչ էր։ Ամենքը արժանի են ծափահարութեան։

ՔՂՔԱԿԻՑ

(«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտօնական ամսագիր Հյուսիսային Ամերիկայի հայոց Առաջնորդարանի, Նյու-Յորք, 1954 թ., հունվար)

ԿԱՅՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՆ ԳԵՐԱՇՆՈՐԸ Տ. ԽԱԴ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ

Նոյեմբեր, 1954-ին, Լիբանանի Հանրապետության Նախագահ Նորին Վսեմութիւն Գամիլ րեյ Շամուն Կիլիկիո Կաթողիկոսութեան Տեղապահ՝ գերաշնորհ Տ. Խադ սրբազան արքեպիսկոպոս Աջապահյանը պատված է Մայրիկներու Մեծ Սպայի Շքանշանով։ Առ այդ, Վարչապետ Սամի րեյ Սուհ, հաճուն Նորին Վսեմութիւն Նախագահին և Լիբանանյան կառավարութեան, անձնապես զնաց Անթիլիաս և Տեղապահ սրբազան հոր կուրծքը զարդարեց շքանշանով։

Շքեղ անցավ պարգևատրումի արարողութիւնը։ Գերաշնորհ Տ. Խադ սրբազան արքեպիսկոպոս կարգաց երախտապարտութիւն, շնորհակալութիւն և Լիբանանի հաջողութիւն հայտնող կոկիկ ճառ մը, որ արաբերեն թարգմանեց հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճախյան։ Վարչապետը սիրալիր պատասխան մը տվավ, և ըսավ ի միջի այլոց.

«1922-ին երբ գաղթական էիք և պետք ունեիք պաշտպանութեան, մենք չզլացանք մեր օժանդակութիւնը. հիմա, որ հաստատված եք և բարգավաճ կ'յանք մը կապրիք, մեր պաշտպանութեան պետք չունիք այլևս, այլ մեր անկեղծ և անվերապահ սիրուն։ Կրնաք վստահ ըլլալ, թե այդ սերը անսահման է։

1942-ին, իբր վարչապետ ես էի, որ հրահանգեցի հայկական վարժարաններուն արաբերենի ուսուցիչներ տրամադրել. հիմա ուրախ եմ, որ այս երիտասարդ վարդապետը ամախջապես և առանց դժվարութեան թարգմանեց ձեր ճառը։ Սա կնշանակե, թե հա-

յերը ամեն տեսակետով դարձած են հարապատ լիբանանցիներ»։

Պարգևատրումի արարողութիւններէն ետք, Նորին Վսեմութիւն վարչապետը շամպանիա խմեց Տեղապահ սրբազանին կենացը, և կրկին շնորհավորելե ու ներկաներուն հետ լուսանկարվելէ ետք՝ մեկնեցավ Անթիլիասին։

Այս առթիւ Լիբանանի «Ջարթոնք» օրաթերթը կ'զրի.

«Մեր կողմէ արտանց կշնորհակալութեանք Կաթողիկոսական տեղապահ սրբազանը այս բարոյական վարժարտութեան համար։ Տարակույս չկա, թե Խադ սրբազան լիովին արժանի էր այս պատվին։ Ան արթուն պահակը հանդիսացած է, երկար տարիներ, Կիլիկիո Ս. Աթոռին, անոր վատ թե լավ օրերուն։ Իբրեւ ամբաստի եկեղեցական, իբրեւ ազգանւիր ու ժողովրդանւիր կրօնական՝ Խադ արքեպիսկոպոս միշտ բարձր պահած է Հայաստանյայց եկեղեցւոյ գերագույն վարկն ու պատիւը։ Ան ջերմ պաշտպանը եղած է Հայաստանյայց եկեղեցւոյ գերագույն շահերուն։ Եւ այս պատճառներով, Խադ արքեպիսկոպոս ժողովուրդին միակ թեկնածուն է՝ Կիլիկիո Կաթողիկոսութեան համար»։

(«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ», պաշտօնական ամսագիր Հյուսիսային Ամերիկայի հայոց Առաջնորդարանի, Նյու-Յորք, 1954 թ., հունվար)

